

Մարգարեկոյն.

633.4.

5-34.

24 SEP 2010

633.4

Մ-34

ԽՈՂ ԼՈՒՍ. ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ—ՍՈՑ. ԴԱՍ. ԳԼԽ. ՎԱՐՁ.


ԱՇԽ. Թ. ԱՍՏԻՃ. ԳՊՐՈՑԻ ԳՐԱԳԱՐԱՆ

ԲՆՈՒՅՅՈՒՆ 4 ԱՇԽԱՏԱՆՔ № 9

Խմբ. Մ Չառափյանի յեզ Ա. Արարատյանի

ՄԱՐԳԱԳԵՏԻՆ

(Եֆեզուցիա)



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹ.

Յ Ե Ե Վ ա 6 — 1927

25.06.2019

19034

605

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 9 «ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ» № 9
Խմբ. Մ. Զառաֆյանի յեզ Ա. Արարատյանի

633.2

Մ-34

48

1003
71056

ՄԱՐԳԱԳԵՏԻՆ

(Եփսոսոսիա)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927

Գրառեպոզիտ 372 ք. հ. 629 Տիրամ 6000

Պետերբուրգի յերկրորդ տպարան Յերեվանում—1190

ՄԱՐԳԱԳԵՏԻՆ

Թե՛ գարնանը և թե՛ ամառը մի առանձին
զբաղչութիւն ունի մարգագետինը:

Տարվա այդ յեղանակներին արժե եքսկուր-
սիա գնալ այնտեղ և ուսումնասիրել՝ արգագետ-
նում բուսած բազմերանգ ծաղիկների ու խո-
տերի կյանքը: Նրանք մեզ շատ բան կսովորեց-
նեն: Փորձենք մի թեթև գրոսանք կատարել ձեզ
հետ և կը գուր հաժողվեք, վոր իսկապես շատ
ուսանելի բան կա այնտեղ:

1. ԽՏՈՒՏԻԿ

Գարնան սկզբներին, մարգագետնի ամենա-
ուշագրայ ծաղիկը խոտափն է, վորի վտակ-
գույն և աստղանման ծաղիկները ձեզ շատ լավ
ծանոթ են: Սակայն դժվար թե առանձնապես
հետաքրքրված լինեք նրա կյանքով և նրա կազ-
մութիւնով:

Խոտափնը բարձրածաղիկների ընտանիքին
պատկանող մի բույս է, վորին շատ հին ժամեր



նակներից «փորացավի դեղ» են համարել, վորովհետև գործածել են ստամոքսի զանազան հիվանդությունների դեմ, վորպես բուժիչ միջոց: Այժմ նա կորցրել է իր այդ նշանակությունը, վորովհետև գիտութունը մեզ ավելի լավ միջոցներ է տվել այդպիսի հիվանդությունն' ըի դեմ կռվելու:

Սակայն մեզ համար նա մի ուրիշ հետաքրքրական կողմ ունի — դա նրա զարմանալի կենսաբանությունն է: Խոտտիկը գարնան առաջին որբերին ծաղկում է և շարունակում է ապրել մինչև ուշ աշուն, մինչև սառնամանիք:

Վորջան անասուններն ուտում են, վորքան շրջագառի մյուս բույսերը նրա տեղը նեղացնում են ու խեղդում, դարձյալ նա շարունակում է նորանոր տերևներ և ծաղիկներ բաց անել: Ակամա զարմանում ես, թե վորտեղից է նա այդքան սնունդ ու սլաշար գտնում:

Յերբ հետաքրքրվում ենք՝ մեզ համար գաղափիրը պարզվում է:

Նրա կարճ, բայց ճշգրտագույն ցողունը պինդ թաղված է գեանի տակ, աջնպես վոր կենդանիները միայն նրա տերևներն ու ծաղիկներն են ուտում, իսկ ցողունը մնում է միշտ անվնաս: Նրա մեջ ամբարված սննդանյութերն անսպաս

են և հնարավորություն են տալիս նրան նոր տերևներ և ծաղիկներ արձակելու:

Յեթե խառուտիկը բուսած է լինում ուրիշ



Նկ. 1. Խոտտիկ


նավություն է ունենում, վորովհետև ակոսածե տերևների վրայով անձրևի կամ առավոտյան ցողի կաթիլները գլորվում են գետին և թափացնում:

Իսկ յեթե նա բուսած է մի սավերոտ տեղ և նրա կյանքին վտանգ է սպառնում, վորովհետև զրկված է լույսից ոգավելու հնարավորությունից, այդպիսի դեպքերում նա վոչ թե լայն

փոռում է իր տերևները, այլ աշխատում է ձգվել դեպի վերև և ապա տարածվել դեպի կողքերը՝ արեի ճառագայթներին դիմավորելու: Նրա նեղ ու ատամնավոր տերևներն այս անգամ ձևափոխվում են և դառնում հաստ, լայնանիստ և բլրթակավոր, վորոնք նրան հնարավորութուն են տալիս լուսինց առատությամբ ոգտվելու:

Մի խոսքով, մենք տեսնում ենք, վոր նա ինչպիսի միջավայրում էլ բուսած լինի, ամեն տեղ հաղթող է դուրս գալիս բույսերի հետ լույսի, սղի և տեղի համար մղած կռվում:

Բայց կարող են նրա համար ել կյանքի այնպիսի դժգոհ պայմաններ ստեղծվել, վոր հակառակ իր դիմացկունության չը կարողանա նրանց հաղթահարել: Դուք կարծո՞ւմ եք, թե նա ուրիշ ազատվելու միջոց չունի: Այգալիսի դեպքերում նրան ոգնության և գալիս, նրա սերմերի տարածվելու գարձա՞յլի հարմարությունը:



Նկ. 2. Բարդածողիկների յեղբածողիկը, փողավոր ծաղիկը և թռչող պտուղը:

Բոլորիդ լավ ծանոթ են խառտիևի հովանոցակերպ մազիկ՝ երով ծածկված սերմերը, վորոնք նրա ծաղիկի թառամելուց հետ ծաղկակի-

թի պատվանդանի վրա դասավորված են լինում գնդի ձևով. քամու մի թեթև հարված բավական է, վոր նրանք բարձրանան ողի մեջ և տարածվեն ամեն կողմ, շատ հեռուները: Վորքան անգամ զվարճացած կը լինեք խառտիկի այդ գեղեցիկ, թավամաղ գլխիկները միմյանց չերեսի փչելով:

Այդ սերմերը քամու միջոցով գնում, տարածվում են շատ հեռուները, վերջապես ընկնում են ցած, գետնի վրա: Յեթե այդտեղը նրանց զարգացման համար բարեհաջող պայմաններ ունի, նրանք ծլում են և նույն թափով աճում, ինչպես իրենց նախկին միջավայրում:

Ուրեմն մեզ ավենքիս ծանոթ խառտիկի կյանքին հետևելով, մենք սովորեցինք վոր խատուտիկն ամեն անգամ նարմարվում է նոր կյանքի պայմաններին:

2. ԽՈՋԿՈՐԻԿ

Այժմ ուշադրութուն գարձենք մեկ ուրիշ բույսի վրա, վորի ծաղիկները գարձյալ գեղնագույն են, բայց ճառագայթանման են և կենտ մի կոթունի վրա նստած: Նրա ծաղկակոթը շատ բարձր է և կարծես սպիտակ թաղիքով ծածկված: Ամենատարրինակն այն է՝ վոր կարծես այդ բույսը տերևներ չունի:

Խոճկորիկը բանում է մեծ մասամբ ստու-
ների ափերում: Նրա գիտական անունն է տու-
սիլագո—վոր նշանակում է «հազի դեղ», ուս-
ներն ստում են «ժայր և խորթ մայր», իսկ
մենք անվանում ենք խոճկորիկ: Այսչափ շատ
անուն ու ենալն արդեն ցույց է տալիս, վոր
նա ուշադրության է արժանացել շատերի կողմից:

Տեսնենք վորոնք են նրա աչքի ընկնող հատ-
կությունները:

Ինչպես սասցիւք, նրա ցողունի վրա կար-
ծես տերևներ չըկան, այլ սպիտակ, թեփանման
տերևիկներ, վորոք թաղիքի նման պինդ կպած են
նրա վրա: Իսկապես այդպես է, բայց միայն
գարնան սկզբներին:

Ավելի ուշ, համարյա, մեկ ամիս հետո, չերբ
նրա բոլոր ծաղիկներն արդեն բացված են և
թառամած, ահա դուրս են գալիս տերևները:
Այդ խոշոր և գեղեցիկ տերևների յերեսը մուգ-
կանաչ գույն ունի, իսկ հակառակ կողմը սպի-
տակ թավամազով է ծածկված: Յեթե տերևի
այդ յերկու յերեսն առանձին-առանձին մոտեց-
նում եք ձեր թշին, ձեզ ախպես է թվում, թե
կանաչ յերեսը սառն է, իսկ թավամազ յերեսը
— տաք: Ահա այս հանգամանքն առիթ է տվել
մարդկանց նրա թավ յերեսը նմանեցնել հարա-
զատ մոր սիրող, տաք համբուլքին, իսկ կոշտ ու

կանաչ յերեսը՝ խորթ մոր սառը վերաբերմուն-
քին: Այստեղից էլ տվել են նրան «ժայր և խորթ
մայր» անունը:

Ի հարկե, մենք պետք է աշխատենք այդ
յերկու տարբեր յերեսների իսկական նշանակու-
թյունը բացատրել: Թավ մազերով ծածկված յե-
րեսն այն նշանակութունն ունի բույսի համար,
վոր այդ մազերը թույլ չեն տալիս խոնավություն
կամ ջուր մտնի հերձանցքերի մեջ (հիշեցեք տե-
րևի կազմությունը) և զրանով արգելվի տերևի
շնչառությունը կամ գոլորշիացման կանոնավո-
րությունը: Թավամազ տերևներով բույսեր շատ
կան, որինակ կոստուկը, ոտենու բողբոջները և
այլն: Թե, իսկապես, խոճկորիկի տերևի ստարին
յերեսը վորքան է պաշտպանվում ջրից, դժվար
չե ստուգելը: Վերցրեք տերևը և ձգեցեք ջրի
մեջ և կը տեսնեք, վոր տերևի յերեսին ջրի կա-
թիլները կանգնում են և արծաթի նման պսպը-
ղում, այդ նշանակում է, վոր թավ մազիկների
արանքում գտնված ողը թույլ չի տալիս, վոր
ջրի կաթիլները ներս թափանցեն:

Խոճկորիկի տերևի որինակն էլ մեզ համար
կարող է ծառայել, վորպես միջավայրին նարմար-
վելու մեկ ուղիչ դեպք:

Ասացինք, վոր խոճկորիկի մյուս անունն
էլ «հազի դեղ» է: Հին ժամանակներում նրա

թրջոցից մի հեղուկ ելին պատրաստում, վոր գործ ելին ածում մրսելուց առաջացած հազի դեմ. կամ նրա տերևները չորացնում ելին, ածուխի վրա այրում և հիվանդին ստիպում ելին, վոր նրանից բարձրացած ծուխը շնչի:

Այժմ ավելի լավ միջոցներ և գտել բժշկությունը հազի դեմ, այնպես վոր մենք կարիք չունենք այդ միջոցին դիմելու:

3. ՓՈՆՆՉՈՒԿ

Փոնչուկը կամ «գարնան բանալին» բազմամյա բույս է, դեղնագույն ծաղիկներ ունի, վորոնք բացվում են վաղ գարնան: Թե ինչո՞ւ չեն նրանք այդպես շուտ բացվում, դա չե՞լ ունի իր պատճառը: Փոնչուկի արմատների և ստորջերկրյա ցողունի մեջ նախորդ տարվանից ամբարվում են մեծ քանակությամբ սննդանյութեր: Հենց վոր

գարունը գալիս է և արևը մի փոքրը տաքացնում գետինը, «գարնան բանալիներն» արգեն պատրաստ են ծլելու: Նը-



Նկ. 3. Փոնչուկը. բույսը, ծաղիկն ու տերևը

րանց համար միայն խոնավություն է հարկավոր և յեղածով ել նրանք բավականանում են: Նրանց ծաղիկներն ու տերևներն ամբողջովին մազմզուկներով են ծածկված, և դրանով պաշտպանվում են ավելորդ ջուր գուրջիացնելու վրտանգից: Տերևները հարթ չեն, այլ գառան մորթու նման գանգուր այդ պատճառով շատ տեղերում նրանց «գառնամորթի» են անվանում:

Ամբողջ բույսից ախորժեղի դեղատան հոտ է բուրում: Նրա ծաղիկները քաղցր համ ունեն, այդ պատճառով շատերը մեծ հաճույքով ուտում են կամ յերեխաները պոկելով ծաղիկների պսակաթերթերը ծծում են նրանց բաժուկանման մասում գտնված քաղցր հյութը:

Փոնչուկի անուշահոտությունը և ծաղիկների վառ դեղին գույնը հրապուրում են պիծակներին ու մեղուներին: Միայն պիծակները կարող են ոգտվել այդ ծաղիկների քաղցրահամ հյութից, վորովհետև նրանց կնճիթները չերկար են, իսկ մեղուները, հակառակ իրանց բուռն ցանկության, անկարող են ճաշակել նրանց հյութը, վորովհետև նրանց կարճ կնճիթները չեն հասնում ծաղիկ բաժակի մինչև հատակը:

Այժմ հետևեցեք փոնչուկի ծաղիկները կազմությանը և գուք անպատճառ կը գանեք յերկու տեսակ ծաղիկներ, նրանցից մի քանիսն

ունեն յերկար վարսանդներ, իսկ առեջները նրա-
տած են բաժականման պսակի խորքում, պատե-
րի վրա. մյուսները կարճ վարսանդ ունեն և
առեջները տեղավորված են ուղիղ բաժակի բե-
րանի շուրջը: (Հիշեցեք ծաղկի կազմությունը):

Շնորհիվ այս յերկձև կառուցվածքի նրանց
հետ կատարվում է միշտ խաչանով փոշոտումն.
աչխնքն նրանց այցելող միջատները բաժակա
նման պսակի բերանին մոտիկ տեղավորված ա-
ռեջների փոշին տանում են յերկար վարսանդ
ունեցող ծաղկի սպիտի վրա թողնում, իսկ բա-
ժակի ներսում գտնված կարճ առեջների փոշին
տանում են կարճ վարսանդ ունեցողի սպիտի
վրա թողնում և այսպես առաջացնում խաչաձև
փոշոտումն:

Այս չերևույթը մեծ նշանակություն ունի
բույսի համար. Փորձը ցույց է տվել, վոր ուղ-
ղակի փոշոտման ժամանակ բույսը քիչ սերմեր է
տալիս, իսկ այդ սերմերից ստացված նոր բույ-
սերը շատ նվազ են լինում և թույլ. իսկ խա-
չաձև փոշոտման ժամանակ ընդհակառակը, բազ-
մաթիվ սերմեր են ստացվում և նրանցից ստաց-
վող բույսերը լինում են հյութալի և զիմացկուն:

Այս չերևույթը տեղի ունի բոլոր բույսերի
վերաբերմամբ, մանավանդ պտղատու ծառերի:
Ուրեմն այգեգործության մեջ մենք կարող ենք,

արհեստական կերպով խաչաձև փոշոտում կատա-
րել և ստանալ առատ ելավածակի պտուղ և սերմ:

Տեսնում եք, վոր վորքան մոտիկից ենք
ծանոթանում բույսերի կյանքի և կազմության
հետ, այնքան նոր բաներ ենք սովորում:

4. ՀՐԱՆՈՒՆԿ

Ուրեմն շարունակենք մեր եքսկուրսիան:
Մարգագետնի մեջ տեղերում, ավելի խո-
նավ մասերում հանդիպում ենք մեկ ուրիշ գե-
ղեցիկ, դեղին աստղանման ծաղիկներով բույսի,
վոր կոչվում է հրանունկ: Նրա տերևները թունդ
կանաչ գույն ունեն, սրաձև են և չեղրերը
գեղեցիկ կտրված, իսկ դեղին ծաղկի թերթիկներն
այնպես են պսպղում, կարծես լաք բսած լինեն:

Այս բույսն ել ունի հետաքրքիր հարմա-
րացումներ: Նրա տերևների անթերի (թևատակ)
տակ գտնվում են առանձին բողբոջներ, վորոնց
ողնությամբ նա բազմանում է: Յերբ բույսը




Նկ. 4. Ջրալին հրանունկ

վորև է պատճառով
թառամում է, նրա
այդ բողբոջներն ընկ-
նում են գետին, անձ-
րևի հեղեղները նը-
րանց քշում, տանում
են կամ կուտակում
մի տեղ: Սովի տա-
րիներում մաքրիկ

համարում, աղուս և նրանից հաց են պատրաստում: Այս և պատճառը, վոր ժողովրդի մեջ մի նախապաշարմունք և ստեղծվել, թե չերկրնից «հացի անձրև» և գալիս:

Վերև հիշած բողբոջների գոյությունն ել բույսի համար մի առանձին նշանակություն ունի: Հրանունկի ծաղիկները բացվում են վաղ գարնանը, այսինքն մի այնպիսի ժամանակ, յերբ միջառներ համարյա չը կան, կամ շատ քիչ կան, ուրեմն, նրա ծաղիկները մեծ մասամբ պիտի մնան չը բեղմնավորված.



Նկ. 5. Հրանունկի ծաղիկը

յեթե այդ բողբոջները չը լինեն, հեշտությամբ բոլոր հրանունկները պետք և յերկրի չերեսից չքանային, ինչպես վոր այդ կատարվել և ուրիշ շատ բույսերի հետ, վորոնք այդ հարմարացումից զուրկ են չեղել: Նշանակում և այդ բողբոջները փոխարինում են սերմերին և իրրև բազմացում առաջացնելու մի գեղեցիկ միջոց, հրանունկին փրկում են անհետանալու վտանգից:

Չը մոռանամ ասելու, վոր հրանունկի չը փոշտվելու պատճառը միայն շուտ ծաղկելը չենա մեկ ուրիշ պակասություն ել ունի, վոր բավականին արգելք և լինում այդ յերևույթի կա-

տարմանը: Մութն ընկնելուն պես նրա ծաղկի բոլոր թերթիկները փակվում են և այդպես մընում ամբողջ գիշերը. իսկ մուսլ ու ամպամած որերին ցերեկն ել չեն բացվում: Ի հարկե, այս ել ունի իր ոգտակար նշանակությունը, այսինքն նախ փոշու հատիկները պաշտպանվում են վաղ գարնան գիշերային հանկարծակի ցրտից և յերկրորդ՝ մասամբ գիշերվա խոնավությունից, վոր նույնպես կարող և վնասակար ազդեցություն ունենալ նրա փոշիների համար:

Յերբ ուշադրությամբ գննում ենք հրանունկի տերևները, նրանց վրա յել տեսնում ենք ուշադրության արժանի հատկություններ: Նրա տերևներն իրենց մեջ պարունակում են թունավոր հյութ, վորի պատճառով վոչ մի կենդանի չի մոտենում նրան: Կարելի չե սպիրտի միջոցով այդ հյութը տերևների միջից հանել, չորացնել և սպա տալ կենդանիներին: Նրանք մեծ բավականությամբ կուտեն և չեն վնասվի: Այսպես որինակ, յերբ հրանունկի թունավոր հյութը հանած և, խողունները մեծ թխորժակով ուտում են:

Տերևների մեջ ունեցած թույնի նարմարցեումը հրանունկներին ապանում և կենդանիներից, իսկ բողբոջնեի նարմարցումով ապանվում և սերունդների շարունակության խնդիրը:

**5. ՍՊԻՏԱԿ ՅԵՂՆՃԱՄԱՅԸ ԿԱՄ ԽՈՒԼ
ՅԵՂԻՆՃԸ**

Մարգագետնի գեղեցիկ զարդերից մեկն էլ խուլ-յեղինճն է, վորից մեր առունների և ցանկապատների յեզրերին էլ շատ կան: Սա շրթնածաղիկների ընտանիքին պատկանող մի բույս է: Նրա սպիտակ ու կարմրավուն ծաղիկները շատ հեռվից նկատվում են և ուշադրութուն գրավում:

Սուլ-յեղինճ անունն են տվել նրան, վորովհետև նրա տերևները թեև խիլական յեղինճի տերևի նման են, բայց խալթիչ չունեն: Առհասարակ յեղինճը և նրա նման բույսերը խիստ համեղ են: Մեծ ախորժակով ուտում են անասունները և նույնիսկ մարդը: Նրանց ծաղիկներն ընդամենը չորս հունգից ավել չեն տալիս: Նշանակում է նրանք վաղուց պետք է բնաջինջ յեղած լինելին աշխարհի յերեսից: Բայց բուն յեղինճի խալթոցը բավականին անախորժութուն է պատճառում մարդկանց և անասուններին, այդ պատճառով նրանք հեռու յեն փախչում: Այդ հարմարութունը խուլ յեղինճին էլ անուղղակի կերպով ոգնության է հասնում, վորովհետև վերջինս արտաքինով շատ նման է նրան: Այդ նմանու-

թյունը պաշտպանում է նրան կենդանիների հարձակումից:



ն. 0. Յեղինճի խալթոցը

1003
11056

Բացի այդ՝ խուլ-յեղինճի ցողունը գետնի տակ բազմաթիվ ճյուղեր է արձակում ամեն կողմ, վորոնք զարնանը ծլում են և նորանոր ցողուններ արձակում. այս նրանց բազմացման յեղանակն է: Սրանով պետք է բացատրել խուլ յեղինճի խմբավորված լինելը. այդ խմբավորումը նրա ստորերկրյա ցողունի ճյուղավորվելու հետևանքն է:

Սուլ-յեղինճի ծաղիկները շատ մեղրատու չեն, գլուզի յերեխաններն այդ բանը լավ գիտեն, վորովհետև հաճախ նրա ծաղիկները պոկելով մեծ բավազանությամբ ծծում են:

Շաքարի այդ հարստության մասին գաղափար ունեն նաև մեղուները, բայց դժբախտաբար այդ քաղցր հյութն այնքան խորն է ծաղկի բաժակի մեջ, վոր նրանք դժվարանում են այնտեղից հանել: Մեծ մասամբ նրանից ոգավում են ափիժակները. թե ինչու, դուք արդեն գիտեք:

Վերև բերած բույսերի որինակներն էլ բավական են, վոր դուք գաղափար կազմեք, թե մարգագետնի այդ հարուստ կյանքում ինչ ձևափոխություններ են կրում նրանք և վորպիսի հար-

մարցումներ ստեղծում իրենց գոյությունը պաշտպանելու համար:

6. ԱՍՏՂԱԾԱՂԻԿ ՅԵՎ ԴԱՇՏԻ ԿՈՏԵՄ

Կարող ենք նույն ձևի ուսումնասիրություն կատարել մեխանիկայի բնույթի պատկանող — աստղաժառանգի կոչված բույսի վրա: Ավելի խոնավ տեղերում կը պատահեք դաշտի կոտեմ կամ սրտաժառանգի կոչված բույսին, վորի նուրբ խաշած ծաղիկները շատ հեռվից աչքի յեն ընկնում թարմ խոտերի մեջ: Այստեղ արդեն ձեր ուշադրությունը կը գրավի մեկ ուրիշ աչքի ընկնող բան: Դաշտի կոտեմի ցողունի վրա դուք կը նկատեք մի փրփրանման հյութ: Անկարելի չե, վոր չը հետաքրքրվեք, թե՞ դա ի՞նչ բան է և վճռաեղից: Այդ բույսի ցողունի վրա ապրում է մի թրթուր, վորին կոչում են փրփրուկ: Ահա, այդ փրփրուկը ծծում է մեր բույսի հյութը, մի առանձին գործիքի միջոցով փչում է նրա մեջ և ոգի փամփուռաներ կազմում, վորից մենք այդ փրփուրի տպափորությունն ենք ստանում: Վորպեսզի այդ փրփուրը վայր չը թափվի և իր տեղում մնա, նա այդ հյութին ավելացնում է մի սոսնձանման հյութ: Այդ փրփուրը մենք կարող ենք և ուրիշ բույսերի վրա յեղ գտնել, որինակ, խոտատիկի վրա, միայն ավելի ուշ, ամառվա վերջերին:

Դաշտի կոտեմի տերևներն ընդունակ են ծիլեր արձակելու: Հենց վոր նրանք թափվում են գետին կամ պատկում գետնի վրա, իսկույն նրանց մի կողմից սկսում են արմատներ դուրս գալ և թաղվել հողի մեջ, ապա նոր ծիլեր տալ և աճել:

Դաշտի կոտեմի տերևներից առաջացած այդ նոր փոքրիկ բույսը ապրիս է տերևներ, ծաղիկներ, պտուղ և սերմ: Ահա ձեզ բույսի բազմացման մի այլ ձևով:

Վորքան շարունակենք, այնքան ավելի նոր յերևույթների կը հանդիպենք մարգագետնի հարուստ միջավայրում: Մարգագետնի գարնան պատկերը մեզ բավականին բան սովորեցրեց: Մենք տեսանք, վոր այնտեղ գտնված բոլոր բույսերը, գրեթե, բազմամյա յեն, այսինքն նրանք հաջորդ տարվա համար նախորդ աշնանից սննդա նյութների պաշար են տնտեսում, այդ պատճառով գարունը գալուն պես նրանք արդեն ծլում են ու ծաղկում: Նրանց մեծ մասը սերմերով չեն բազմանում, այլ ստորերկրյա ցողունների Մի փոքր ջերմություն, մի փոքր լույս և արդեն նրանց տերևներն ու ծաղիկները պատրաստ են:

Բայց պակաս հետաքրքրական չե նաև մարգագետնի ամառվա կյանքը: Ամառվա երկուրսիան մեզ համար ուսումնասիրելու նոր

նյութ կը տա: Այնտեղ մենք կուսումնասիրենք վոչ թե բույսի կյանքը բույսի համար, այլ բույսի նշանակութիւնը կենդանիների և մարդու համար:

7. ՏԵՐԵՓՈՒԿ ԿԱՍ ԿԱՊՈՒՏԱԿ


Ամառվա եքսկուրսիան կսկսենք բարդածաղիկների ընտանիքին պատկանող մի ծաղկի ուսումնասիրութեամբ վոր կոչվում է տերեփուկ կամ կապուտակ: Նա իր բաց կապուտակ պատկով ու գեղեցիկ կողովով ամառվա ամենագեղեցիկ և ամենասիրելի ծաղիկն է: Վոսկեգուշն արտերի և մարգագեանի կանաչագուշն խոտերի մեջ նա միշտ կանգնած է վորպես հնձի և ամառվան խորհրդանշան:

Տերեփուկի ծաղիկը պարզ ծաղիկ չէ, այլ ծաղկափթիթով ծաղիկներին մի համախմբում, վորոնք մտա-մտա նստած են մեկ պատվանդանի վրա և մեկ զամբուղի մեջ: Այս ձևի ծաղիկներ շատ կան լեռնաշղթաների վրա և բարդածաղիկների ընտանիքն են կապուտակ: Առանց վիճելու կարելի չէ ասել, վոր նրանք չերկրագնդի բոլոր բույսերից ամենաբարդափթիթի են, համարյա նրանց $\frac{1}{10}$ մասն են կապուտակ: Այս բոլորից պետք է չեզրակացնել, վոր նրանք շատ նպատակահարմար կազմութիւն ունեն և տեր-

մերի տարածման ավելի կատարելագործված ձև:

Գերմանացի հայտնի ծաղկաբան Հերման Մյուլլերը դիտնականն ասում է, վոր բարդածաղիկների ընտանիքին պատկանող բույսերն: ասն առավելութիւնն ունեն, վոր նրանց ծաղիկները միախառնված են մեկ ընդհանուր զամբուղի մեջ: Այդ հարմարացումը նրանց ավելի նկատելի չէ դարձնում, քան լեթե նրանք առանձին-առանձին լինեյին, հետևաբար միջատները նրան ավելի շատ և հաճախ են այցելութեան գալիս, քան մյուս բույսերին:

Բարդածաղիկների մասին այս ընդհանուր ծանոթութիւնն ունենալուց հետո դաննանք մեր տերեփուկին, վորը կարող է նրանց ամենալավ ներկայացուցիչը համարվել:



Նկ 7. Տերեփուկ

Տերեփուկի պատու- ներն աշխարհ թափվում են գետին և լեթե ընկան խոնավ հողի մեջ, ասն միջապես ծլում են: Նրա փոքրիկ աննկատելի ծի- լերը թաղվում են ճրան տակ և շատ հաջող կերպով ձմեռում են ալդ վերմակի տակ մինչև գարուն: Գարնան արևը ջերմացնելուն պես նր-

րանք սրադուլթյամբ գլուխները բարձրացնում են, ուղիղ ցցվում գեպի վերև, ճյուղավորվում են և ծածկվում նշաարածև, սրածայր տերևներով: Թե տերևները և թե ցողունը պատած են մոխրագույն մազիկներով, այդ պատճառով, չեք բեր վառ-կանաչ գույն չեն ունենում: Ծիշտ ան ժամանակ, չեք ծաղկում և ցորենը, տերեփուկի ցողունի ծայրին յերևում են առաջին կողովները: Կարճ ժամանակում նրանց հրաշալի կապուտակ ծաղիկներով ծածկվում են վուկեգույն արտերը և այդպես մնում մինչև հունիսը:

Վերջնենք այդ ծաղիկներից մեկը և ավելի մանրամասնորեն ծանոթանանք նրա կազմութեան հետ:

Քանդեցք այդ ծաղկի զամբյուղը և նրա բոլոր ծաղիկները թափեցք մի սպիտակ թղթի վրա, այն ժամանակ կը տեսնեք, վոր այդ զամբյուղի մեջ կան ութից մինչև տասներկու հատ խոռոր, ձագարանման յեզրի ծաղիկներ, վորոնք գուրկ են վարսանդից և առեչներից. հետո տասներեքից մինչև քսանհինգ հատ փոքրածև (խոզովակածև) ծաղիկներ, վորոնք թե վարսանդ ունեն և թե առեչներ: Զամբյուղը դրսի կողմից պատած և միմյանց վրա կզմինդրների նման տերևիկներով: Միջին ծաղիկները յեզրերի ծաղիկներից բավականին փոքր են. և չը նայելով վոր

իրանք թվով ավելի շատ են, բայց պատմանդանի վրա ավելի քիչ տարածութուն են բռնում:

Յեզրի անպտուղ ծաղիկներն են կազմում տերեփուկի զարդն ու զարդարանքը: Այդ գեղեցիկ ծաղիկները բոլորովին գուրկ են բույսի ամենաեղևական մասերից, առեչներ բոլորովին չունեն, իսկ վարսանդի փոխարեն մի փոքրիկ սերմնարան, վորի մեջ ի նարկե սերմնաբողբոջ էլ չկա, հետևաբար անընդունակ են պտուղ տալու: Սակայն վորպիսի խղճուկ տեսք կունենա՞ր մեր տերեփուկը, յեթե այդ յեզրի ծաղիկները չը լինեին, վորքան միջատների այցելութունից պիտի նա զրկվեր: Այդ ծաղիկների միակ նշանակութունը միջատներին հրատուրելն է: Վորովհետև զամբյուղի մեջ գտնված բոլոր ծաղիկները միանգամից չեն բացվում, այլ ամենից առաջ բացվում են դրսի շարքերում յեղածները և ապա հետագհետև ներսինները, ուրեմն յեզրի անպտուղ կամ ամուլ ծաղիկները պետք է մինչև վերջը ծաղկած մնան, մինչև վոր ներսի բոլոր ծաղիկները բացվեն:

Յերբ առանձին վերցնում ենք մեկ հատ ամուլ ծաղիկ, տեսնում ենք, վոր նա իր փոքրիկ սերմնարանով նստած է ծաղկեպատվանդանի յեզրին, սերմարանի վրա ծաղկի փողածև մասը չըջատարտված է բարակ մազիկներով, իսկ վե-

բին ձագարաձև մասը ծոված ե գեպի գուրս և ունի 7—8 հատ խոր կարված բլթակներ: Այդ ծաղիկները վնչ հոտ ունեն և վաչ ել մեղր, այլ միայն նրանց գեղեցիկ գույնն է, վոր ուշադրութունն է գրավում:

Բորբոսիկն ուրիշ կառուցվածք ունին 13—25 փողավաճ ծաղիկները: Նրանց սերմնաբանը լիովին զարգացած է: Այդ ձվավաճ սերմնաբանն անմիջապես նստած է պատվանդանի վրա և ընդամենը մի սերմնաբողբոջ ունի իր մեջ: Նրա վերին մասում գտնվում են մի փունջ մագիկներ շատ մոտիկ նստած: Դրանք վոչ այլ ինչ են, յեթե վոչ ձևափոխված բաժակաթերթեր:

Այդ մագիկավոր բաժակի միջով բարձրանում է պսակի խողովակաձև մասը, վոր վերեփում լայնանալով դառնում է գանդակաձև, բաժանվում է հինգ մասերի և աստղանման տարածվում բոլոր կողմերը: Այդ հինգ թերթիկանի պսակները շատ տարբեր գույներ ունեն. նրանց զրսի վերին ծայրերը կապույտ են, վորոնք վարջան ցած են իջնում և մոտենում են սերմնաբանին, այնքան ավելի և ավելի գունաավում են:

Պսակի մեջ գտնվում են հինգ հատ առեղներ, վորոնց փոշանոթները միմյանց մոտ սեղմվելով խողովակի նման զրկում են վարսանդի սունակը: Սունակը սերմնաբանի անմիջական շարունակու-

թյունն է, նրա հիմքին մոտիկ գտնվում է մի առանձին ողավաճ գոտի, վոր հաշանի յե «նեկտարի ոձիկ» անունով և իր մեջ մեղր է պարունակու: Թելանման սունակը չ'ըկարածգված է գեպի վերև և ծայրը բաժանվում է չերկու մասի, վորոնք մշտապես թաց են և ծածկված մի սոսնձանման նյութով: Ծաղկեփոշին անմիջապես կաշում է նրա վրա և չի կարող բաժանվել:

Պետք է ասել, վոր տերեփուկի խողովակաձև ծաղիկները շարված են յերկու կամ չերեք կարգ շրջանաձև, սնպես վոր զրսի շրջանի մեջ գտնված ծաղիկները, վորոնք ավելի մոտիկ են չեզրի ամուլ ծաղիկներին, ավելի շուտ են բացվում: Մինչև ներսի շրջանի ծաղիկները բացվելը, առաջի շրջանի ծաղիկներն արդեն բեղմնավորված են լինում ուրիշ ծաղիկների փոշիով: Այս կերպի դասավորութան շնորհիվ սակեղծվել է մի շատ բարեհաջող պայման խաչաձև փոշոտման համար: Յուրաքանչյուր դարբուղի ծաղիկ բեղմնավորվում է մյուս գամբուղի ծաղիկներից, վորովհետև մինչև վոր ներսի ծաղիկները վարսանդները հասունանում են և նրանց սպինսրը բացվում, զրսի շրջանի ծաղիկների փոշին արդեն միջատները տարած են լինում: Այնպես վոր ամենաներսի ծաղիկները կարող են փոշու-

վել միայն մեկ ուրիշ զամբյուղի նոր բացված
ծաղիկների փոշուց, միջատների միջոցով:

Տերեփուկի ծաղիկն այցելող միջատները
շատ են: Հերման Մյուլլերի ասելով մեա ութ
տեսակ միջատներ կան, վրոնք զրեթե մշոտ
պես անբաժան են նրանից: Իսկապես նեկտարի
ոճիկի արտադրած մեղրն այնքան առատ է,
վոր բարձրանում է մինչև պսակի զանգալ անման
լայնացած մասը, և մատչելի չէ դառնում նույն
իսկ ամենակարճ կնճիթ ունեցող միջատների
համար: Մակայն մեղրի մեծ մասը խողովակաձև
մասուճն է, վորից միայն լերկարակնճիթ թի
թեռները, մեղուները և պիծակները կարող են
ուզովել:

Յես կարծում եմ, մենք վատ չարեցիներ,
վոր տերեփուկի ծաղկի վրա այնքան մանրա-
մասն կանգ առանք: Արժեք նրանով զբաղվել:
Այս որինակով մենք սովորեցինք, թե ինչպիսի
կոխնարաբերություն կա բույսերի յեվ կենդանի-
ների մեջ յեվ թե ինչպես նրանք միմյանց լրաց
նում են: Ի՞նչ կը լիներ տերեփուկի կյանքն ա-
ռանց միջատների և միջատների կյանքն՝ առանց
տերեփուկի:

8. ԽՈՏՃՈՒՆՁ

Ո՛վ խոտհնձի ժամանակ չեղել է մարգագետ-
նում, նա անպատճառ զղացած կը լինի այն մեծ

հաճույքը, վոր ստանում է մարդ նոր հնձած խո-
տի չափը բուրմունքից:

Սոսհունձը գյուղացու աշխատանքի ամենա-
կենդանի ժամանակն է: Ի՞նչպիսի մեծ հաճույք
է գյուղական չերեխաների համար առավոտ վաղ
սայլով գնալ հեռու մարգագետիններն ու արոտ-
ները՝ մասնակցելու խոտհնձի աշխատանքին:
Սոտ չորացնելը, խոտ շուռ տալը, խոտի գեղե-
րի տակ զիշերելը, աշտ խոտով բարձած սայլի
զլխին թառած վերջալույսին տուն վերադառ-
նալը, սրանք այնպիսի հաճույքներ են, վոր
մարդ միշտ մեծ բավականությամբ է հիշում:

Վորքան գեղեցիկ պատկեր է հեռվից հրնձ-
վորներին դիտելը, չերք նրանք ձեռքերի միալար
շարժումներով գերանդիով կարում են խոտը և
ուղիղ շարքերով գետին փռում:

Իսկ նոր հնձած թարմ խոտի ախորժեղի և
արբեցնող հոտից մարդ չի կշտանում: Մակայն
այդ հոտը միայն մարգագետնի խոտերին է հա-
տուկ, դուք այդ հոտը չեք զգա ճահիճներից
կամ ճիմերից հավաքած խոտերի մեջ. այնտեղ
ավելի շուտ խոնավության և փտածության հոտ
եք զգում:

Միթե հեռաբլբլի չե, թե վորտեղից է մար-
գագետնի նոր հնձած խոտի այդ քաղցր բուր-
մունքը: Ի հարկե շատ հեռաբլբլի է: Մենք
հենց այդտեղից ել կսկսենք մեր ուսումնասիրու-
թյունը:

Յեթե հոանտելով փնտռեք խոտերի մեջ, դուք այնտեղ կը գտնեք շատ աննշան և համարյա աննկատելի մի փոքրիկ բույս, վորին ժամանոտ կամ «նոտավետ հասկ» են անվանում:

Ահա հենց նա չե այդ քաղցր բուրմուռների աղբյուրը:

Հնձած խոտի մեջ վորքան շատ լինի «հոտավետ հասկ»-ի քանակը, այնքան մեծ կը լինի նրա բուրմուռնը: Վերցրեք այդ փոքրիկ խոտից մի կտոր, ձեռքերիդ մեջ տրորեցեք և հոտ քաշեցեք կամ տարեք բերաններդ և մի թեթև ծամեցեք, անասելի դուրեկան հոտ կզգաք: Ի՞նչն է այդ հոտի պատճառը: Քիմիկոսները քննել և գտել են, վոր այդ քաղցր հոտի պատճառը «կամարին» կոչված նյութն է: Այդ նյութը ջրի մեջ

լուծվում է և դառնահամ է: Չը կարծեք, վոր միայն «հոտավետ հասկի»-ի մեջ կա կամարին, այլ և կորնգանի, ասպրիկի (մեղրածուծ) և ուրիշ շատերի մեջ: Այդ նյութից առանձին խմիչք ել են պատրաստում, վորի գլխավոր հատկությունը հենց այդ քաղցր բուրմուռնն է:



Նկ. 8. Կորնգան

Լավանդան կամ նարդուր նույնպես հարուստ

է այդ նյութով, վորից պատրաստում են անուշահոտ սծանելիքներ:

Զարմանալին այն է, վոր խոտակեր կենդանիները վորքան հաճույքով ուտում են ժահահոտը և կորնգանը, այնքան խուսափում են ասպրիկից, չեքեի վերջինիս մեջ կամարինի քանակըն այնքան շատ է, վոր նրանք վախենում են վրասվելուց:

Ուրեմի կենդանիներն ևս ունեն մի ներքին հարմարացում, վորով կարողանում են նախազգուշանալ և ամեն անպատահական խոտ չուտել: Նրանց այդ հարմարացումը յերկու նշանակություն ունի, մեկ կողմից նրանց փրկում է նրանց կյանքին վտանգ սպառնացող բույսերից, մյուս կողմից լավ համ ունեցող բույսերն ել ազատվում են բոլորովին վոչնչանալու վտանգից:

Նոր հնձած խոտի մեջ նման շատ հետաքրքիր բաներ կան, արժե նրանցից մի քանիսի հետ ծանոթանալ:


9. ՄՈԼԵՒԻՆԳ

Դուք անշուշտ ծանոթ կը լինեք մոլեխինդ կոչված բույսի հետ. նա թավշապատ և կպչուն տերևներ ունի, սպիտակադեղնավուն և պզտոր գունով ծաղիկներ ունի, վորոնք կարծես դիտ-

մամբ կեղտոտված լինեն և խիստ անախորժ հոտ են արձակում: Դյուղերում սովորութունն ունեն նրա սերմերը կամ տերեւները ծխելու, վարից խելագարի նման հարբում են ու զառանցում: Իսկ ուտելու դեպքում ուղղակի խելագարվում են և մեռնում:

Մեկ անգամ Շվեյցարիայի Գրավոս գյուղի դպրոցի խոհարարը սխալմամբ մոլեխինդի արմատը, նրա նման մեկ ուրիշ գործածական արմատի փոխարեն ճաշին տալիս է յերեխաներին: Բարեբաղդաբար, շուտ կմացվեց և բոլոր աշակերտներն ազատվեցին վտանգից, բայց մինչ այդ՝ նրանցից շատերը չերկար ժամանակ խելագարի վիճակումն էլին, վտանք այնպիսի շարժումներ ելին անում, իբր թե ողի մեջ ինչ վոր բաներ են վոր-

սում, ուրիշները զառանցում էլին, իբր թե փողոցում շաղաված փող են հավաքում. մեկին այնպես երթվում, թե վտաքերի մեջ փշեր են մտել և աշ-



Նկ. 9. Մոլեխինդ A. բույսը, B. ծաղիկը, C. պտուղը,

խառում է հոնել, մեկ ուրիշը մասներով սուրճ է խառնում, մի խոսքով նրանցից ամեն մեկը մի մի հիմարութունն եր անում, առանց զխաղցելու:


Մեր գյուղերում ել նման դեպքեր պատահել են: Փոքրիկ յերեխաները խաշխաշի հատիկների նման մոլեխինդի սևագույն սերմեր, կերել և խելագարվել են: Յեթե ծննդները շուտ նկատել են, մաժուկն ուտացնելով նրանց փրկել են մահից. իսկ չեթե վնչ. թունավորվածները մեռել են: Մոլեխինդը վաղ միայն թույն է մարդկանց համար, այլ և անասունների: Պեսաք է շատ զգույշ լինել նրան ձեռք տալուց:

10. ԺԱՆՏԵՆԿՈՒՅՁ ՅԵՎ ԱՐՎԱՆՏԱԿ

Խոտակեր կենդանիները շատ զգույշ են. չեն ուտում, նույն իսկ չեն ել մոտենում, իսկ չեթե պատահմամբ մյուս խոտերի հետ վերցնում են, մոլեխինդ, ժանտընկույզ և արվանտակ բույսերը, վորոնց ճանաչում են նրանց վանող զգվելի հոտից, իսկույն դեն են ձգում:

Ժանտընկույզը մեծ մտամբ աղբոտ տեղերում է բուսնում, բայց չերբեմն մարդագետնի խոտի մեջ ել է պատահում: Գնչուներն այս

բույսի հասկությունների հետ լավ ծանոթ լի-



Նկ 10 Ժանարնկույզ
A. Բույսը B. պտուղը

թունավոր սերմերը, վորից մի անտանելի հո-
տով ծուխ է բարձրանում. այդ ծխից հոտ են
բաշել տալիս մարդկանց և հավատացնում են,
վոր շուտով նրանք պիտի աեսնեն իրենց մե-
ռած սիրելիների հոգիները: Տգեա մարդիկ հա-
վատարով յենթարկվում են այդ փորձին և թու-
նավորվելով սկսում են գառանցել: Ի հարկե,
այս բանն իմաստուց հետո վոչ միայն դուք կը
զգուշանաք նման փորձերի յենթարկվելուց, այլ
և ձեր բոլոր մերձավորներին կը բացատրեք
զնչունների խարդախությունը և կը ցրեք ժողո-
վրդի մեջ տարածված նման նախապաշարմունք-
ները:

Արվանտակը պղպեղի հոտ ունի, նրա աե-
րենները ձիու սմբակի նման են. խոտակերները
չեն ուտում: Ղանձիլը սաստիկ փոշտոց է առա-

ջացնում, վոր մարդու կատաղացնում է: Կեն-
դանիններն այս բանը լավ զգում են և աշխա-
տում նրանից հեռու փախչել:

Յեթե խոտի մեջ յեղինճ է պատահում կեն-
դանինները դարձյալ խույս են տալիս: Ի հարկե,
այս անգամ վոչ թե այն պատճառով, վոր նա
վնասակար է, այլ նա իր վրա կրում է բազմա-
թիվ խայթիչ փշիկներ: Յեթե ուժեղ խոշորա-
ցույցով զիտելու լինենք այդ փշիկները՝ կը տես-
նենք, վոր նրանք շատ նման են ոձի թունավոր
ատամին, նրանց հիմքին մոտիկ կա մի թուչ-
նով լի պարկ: Յերբ այդ փշիկը մանում է կեն-
դանու մաշկի մեջ, փշրվում է և պարկի թուչնը
թափվում վերքի մեջ: Յեթե այդ բանը պա-
տահում է շրթունքի, կլանի կամ լիզվի վրա,
սաստիկ անախորժություն է պատճառում: Ահա,
թե ինչու յնն նրանք զգուշանում յեղինճ ու-
տելուց (տես նկ. 6):

Սոտակերների համար նուչնպիսի անախորժ
խոտ է նաև Գայլաթաթը, վորի տերևների մեջ
կա տոխպ համով մի հեղուկ նյութ — տանին-
արջականջը, վորի մագիկները խիստ շանգոց
են առաջացնում կենդանիների բերանի մեջ փոշ
ձեցեք արջականջի մի շուղ մոտեցնել կովի բե-
րանին, նա հոտ քաշելուց հետո անմիջապես
չեա կը փախչի:



Բոլորը հնարավոր չէ այստեղ թվել: Առտակերներն իրենք լավ են ճանաչում: Նրանք լավ հոտառութուն ունեն, բավական ե մի խտտից հոտ բաշեն, արգեն կը հասկանան, թե հապետքական ե, թե վոչ:

Մենք զբաղվեցինք միայն վնասակար խոտերի հետ ծանոթանալով. բայց կենդանիների զործածած խոտերից ոգտակարներն ավելի շատ են:

11. ԱՌՎՈՒՅՏ ՅԵՎ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐ

Վերցնենք զարձալ ամենքից լավ ծանոթ առվույտը, վոր անասունների ամենախրած բույսն ե, բայց պիտի ստել, վոր չափից ավելի գործածութունը նրանց վնասուած ե: Առվույտի ծաղիկները գանազան գույնի յեն լինում—սպիտակ, կարմիր, վարզագույն ե այլն: Առվույտի ծաղիկներից մեզրի հոտ ե բուրում. ե իսկապէս, նրանք իրենց մեջ պարունակում են զգալի քանակութամբ մեղր, բայց հայտնի չէ, թե ի՞նչ մեղուները նրանցից հեռու յեն փախչում: Ասում են, իբր թե նրա մի քանիսների



Նկ. 11 Առվույտ

մեջ փոքր քանակութամբ այնպիսի թթուներ կան, վորոնք նրանց համար վնասակար են: Բայց ավելի շատ պետք ե յենթադրել, վոր մեղուները այնպիսի հարմարութուններ չունեն, վոր կարողանան առվույտի ծաղիկների խորքում գտնված նեկտարի պարկին հասնել. նրանց կնճիթը կարճ ե:



Նկ 12. Վիկ

Առհասարակ խոտի մեջ գտնված ոգտակար բույսերի թվում կան-քարատվույտ, յեղջերս ուլույտ, վիկ, սկան վուլուն, յերեքնուկներ, վորոնք ընդհանուր անունով կոչվում են լոբազգիներ կամ թիթեռնա-ծաղիկներ: Կան նաև բարդածաղիկների, շրթնածաղիկների, զանգականմանների, խաչածաղիկների, հովանոցանմանների, պատատուկների ե խոտաբույսերի տեսակներին պատկանող շատ բույսեր:



Նկ. 13. Յերեքնուկը

Անա մեկ ուրիշ բույս—հագարատերեւուկը, վոր բարդածաղիկներն ընտանիքին և պատկանում: Նա միշտ արև տեղերում և բուսնում և վոչխարների ամենասիրելի կերակուրն է: Նրանից դառն հոտ է բուրում: Յենթագրվում է, վոր այդ դառնո թյունն է նրանց հրապուրողը: Մի ժամանակ այդ բույսի թրջոցը գործածում էին զանազան վերքեր բուժելու համար:




Նկ 14. Յերեքնուկի ծաղիկփունջը

Անա չեղջերավոր անասունների և ձիերի սիրած մեկ ուրիշ բույսը—գստնալեզուն, վոր համարյա ամեն տեղ սարածված է: Նրա արագ տարածվելու պատճառը նրա սերմերի զարմանալի հարմարացումն է: Վորևէ անասուն կամ մարդ մոտով անցնելիս անմիջապես նրա սերմերը կաչում են և նրանց հետ անդափսլվում ուրիշ տեղ:

Ի հարկե խոտի մեջ այսպիսի համեղ բույսերի թիվը շատ է, բայց նրանց մեջ ամենագլխավոր տեղը բռնում են այն ընտանիքին պատկանող բույսերը, վորոնք ընդհանուր անունով կոչվում են խոտաբույսեր:

Մեր անասունների կերը կազմող խոտաբույսերը շատ բազմատեսակ են: Ամենատարածվածը տիմոֆեյի խոտն կամ սիզախոտը, վորի վրա առանձին ուշադրություն են դարձնում մեր բոլոր գյուղատնտեսները: Սրանից 100 տարի առաջ ամերիկացի Տիմոֆեյ-Հանսենն իմացավ այդ բույսի արժեքը և այժմ նրա անունով էլ կոչվում է: Դա ընտանի կենդանիների ամենահամեղ և լավ կերն է: Շատ հեշտ է այդ բույսը մշտներից տարբերել, վորովհետև շատ սարորինակ ծաղկափթթուլթյուն ունի: Նրա ծաղիկների փունջը նժան է լամպի ապակի սրբելու խողանակին:



Նկ. 15. Սիզախոտ

Նման ծաղկփթթուլթյուն ունի նաև աղլետազին (կամ ազվեսաձետ) միայն նա մի փոքր ավելի յերկար է և ծայրը սուր, այնպես վոր շատ նրման է ազվեսի պոչին: Տիմոֆեյի խոտի փոշա

նովները մանուշակագույն են, իսկ սպիտակազ-
ինը—դեղին:

Սրանց թվին են պատկանում
աբրժանատարը, ավերախոտը, վոզ-
նու խոտը, բրոմուսը և հասարակ
սեզը:

Այս աննշ ն և չնչին խոտերը
բացի այն, վոր կենդանիների հա-
մար իբր կեր են ծառայում, բնու-
թյան մեջ ել նրանց կատարած գե-
րը շատ մեծ ե: Նրանք գետնից ծը-
ծելով անձրևների և մթնոլորտային
տեղումների ջրերը, գոլորշիացնում
են և նորից վերադարձնում ոգին:
Այդ գոլորշիներն այնտեղ խտանալով
գառնում են ամպ և նորից անձրևի
կաթիլներով թափվում ցամ:

Առանց այս խոտերի, ոգի թթվածնի բա-
նակը ն էջնպես կը պակասեր: Հաշվել են, վոր
մեկ դեսյատին սիգախտան ամեն տարի ոգից
վերցնում ե 9000 փութ ածխածին. դրանից կա-
րելի յե չեզր սկացնել, թե ամբողջ չերկրագնդի
վրա ծածկող սիգախտանի հսկա տարածու-
թյունն ինչպիսի քան . կաթյաժր ածխածին կը
կլանեն:

Կենդանիների արտաշնչած ածխածին ամ-



Նկ. 16
Ազվեսագին

խածինը կլանելուց հետո թթվածինը վերադարձ-
նում են ոգին: Ուրեմն թթվածին մտատկարու-
րելու մեջ ել նրանք խոշոր գեր են խաղում:
Այսպես ուրեմն, չը նայելով նրանց այդ աննշա-
նությանը, նրանք մեր գաղափար բարեբաններն
են, առանց նրանց մենք կը
կլանվի համ ար այնքան անհրաժեշտ թթվածնից:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿՂ

1. Խոստտիկ	3
2. Խոճկորիկ	7
3. Փռնչուկ	10
4. Հրանունկ	13
5. Սպիտակ յեղնճամայր կամ խուլ-յեղինճ	16
6. Աստղածաղիկ և դաշտի կոտեժ	18
7. Տերեփուկ կամ կապուտակ	20
8. Խոտհունձ	26
9. Մոլեխինդ	29
10. Ժանտընկույզ և արվանտակ	31
11. Առվույտ և խոտաբույսեր	34

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՒՅՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՑ

	Գինը
1. Տերեվաթափ և աշնան գուլներ . . .	10 »
2. Կենդ. հարմարացոււմը և ձմեռային բունը.	10 »
3. Թռչունների չուն	10 »
4. Պտուղներ և սերմեր	10 »
5. Հող և նրա մշակոււմը	10 »
6. Բանջարանոց.	10 »
7. Ալգի.	10 »
8. Ինչ վոր կցանես, այն ել կհնձես .	10 »
11. Բամբակ	10 »
12. Տորֆ, քարածուխ և նավթ	10 »
13. Կովի կերը և խնամքը.	15 »
15. Ընտանի թռչունների խնամքը	20 »
16. Մեղու	15 »
20. Հանքեր.	15 »
21. Շերամ	10 »
22. Անտառ	15 »

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

10. Ող և ջուր.	
14. Կաթնամթերքներ.	
17. Գյուղատնտ. մեքենաներ և գործիք- ներ	
18. Ակվարիում և տերրարիում	
19. Ինչպես կազմել հերբարիում	

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

« Ազգային գրադարան



NL0280635

19.034